

Nr.
6

ՄԱՍԻՍ. Ռ-ՀԱՅ ՀՐԱՏ. ԱՆԱՆ. ԸՆԿ.

10
ԼԷՅ

ՄԱՍԻՍ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍԻՍ

ՏՐ



850

Կ-52

1935

Մօրե Հասար

Պուրե

”ՄԱՍԻՍ” ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՊՈՒՔՐԻՇ

Պրն. Գր. Հալաճեան — 1 տարուան, Մուսուլի հայ վարժարանին
» Մեսցելի — » » Գէորգ Յովնանէսեանի (Պուքրէշ)

ՎԱՐՉԱԿԱՆ

«Մասիս»ի Պուքրէշի ընդհ. գործակալն է, Պրն. Յ. Ճգնաւորեան,
որուն պէտք է վճարուն բոլոր բաժնեգիրները:
— Փափաքողները կրնան վճարել ընկերութեանս կեդրոնատեղին:

”MASIS”

SOCIETATE ANONIMA DE EDITURA

CAPITAL SOCIAL LEI 500.000

SEDIUL — BUCUREŞTI — B-dul MARIA No. 8 Etaj II

Ա-52

06 AUG 2016

«ՄԱՍԻՍ» Ռ-ՀԱՅ ՀՐԱՏ. ԱՆԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 30 MAY 2011

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԹԻԻ 6

ԷՏՄՈՆԹ ՏՄՄԻՉԻՍ

Մ Օ Ր Ը Հ Ա Մ Ա Ր



ՊՈՒՔՐԻՇ

Տպարան «Ասորիա» Ե. Սարգսեանի

Բիֆսոբ Լուփան 14

1935



ՄՈՐԸ ՀԱՄԱՐ



Հատ տարիներ առաջ, տասներեք տարեկան ճեղովացի տղայ մը, գործաւորի զաւակ, ճեղովայէն Ամերիկա գնաց — միս-մինակ — իր մայրը փնտռելու համար:

Մայրը երկու տարի առաջ Պուէնոս-Այրէս գացած էր, Արժէնթինի Հանրապետութեան մայրաքաղաքին մէջ, հարուստ ընտանիքի մը մօտ ծառայութեան մտնելու, որպէսզի այս ձեւով ղրամ փաստիկի և պարտքէ ազատէ իր ընտանիքը, որ աղքատութեան պատճառով պարտքի տակ ինկած էր:

Խեղճ մայրը արիւն արցունք թափած էր երբ կը բաժնուէր իր զաւակներէն, որոնցմէ մեծը 18, իսկ պզտիկը 11 տարեկան

էր, բայց քաջասրտութեամբ և յուսալից՝ մեկնած էր: Ճամբորդութիւնը հանգիստ անցած էր: Հագիւ

Պուէնոս-Այրէս հասած, Ճենովացի խանութպանի մը միջոցաւ, որ իր ամուսնոյն հօրեղբոր որդին էր, և շատ տարիներէ ի վեր հոն հաստատուած, գտաւ արձենթի-նացի բարի ընտանիք մը, որ իրեն գոհացուցիչ ամա-կան մը կու տար և ազնուութեամբ կը վարուէր հետը:

Հագիւ տեղաւորուած, առաջին հոգը եղաւ ի-րեններուն նամակ գրել և անկէ վերջ կանոնաւոր կերպով կը թղթակցէին: Ամուսինը իր նամակները կը զրկէր իր հօրեղբոր որդիին հասցէով որ գանոնք կնոջը կը յանձնէր. իսկ կինն ալ իր նամակները կը յանձնէր նոյն մարդուն որ անոնց վրայ իր կողմէն քանի մը տող աւելցնելով ճենովա կը զրկէր:

Ամիսը 80 ֆրանք շահելով և իրեն համար գրեթէ ծախք չընելով, ամէն երեք ամիսը անգամ մը բաւա-կան խոշոր գումար մը տուն կը զրկէր: Ամուսինը որ շատ համեստ մարդ մըն էր, կնոջմէն ստացած գրամ-ներով հետզհետէ տան պարտքերը կը վճարէր և իր համբաւը կը վերականգնէր:

Ինքն ալ վերջապէս կ'աշխատէր պզտիկ գործով մը և գոհ էր, միեւնոյն ատեն յուսարով որ քիչ ժամա-նակէն կինն ալ պիտի վերադառնար. որովհետեւ ա-ռանց անոր տունը բոլորովին պարտապ մնացածի պէս էր, մանաւանդ որ պզտիկ տղան, որ չափէն աւելի կը սիրէր իր մայրը, միշտ տխուր էր և չէր կրնար անոր բացակայութեանը համակերպիլ:

Մեկնելէն տարի մը անցած էր, երբ օր մը կարճ նամակ մը ստացան որուն մէջ մայրը կը գրէր թէ քիչ մը տկար է. իսկ անկէ յետոյ անցան ամիս-ներ, բայց այլեւս ոեւէ նամակ չէր գար:

Երկու անգամ հօրեղբոր որդւոյն գրեցին որ չպա-տասխանեց: Գրեցին արձենթիւնացի ընտանիքին որուն ժօտ ծառայ մտած էր, բայց նամակը ետ եկաւ,

«Անունը անծանօթ է» մակագրութեամբ թղթատան կողմէ աւելցուած:

Դժբաղդութենէ մը վախնալով, դիմեցին Պու-էնոս-Այրէսի իտալական հիւպատոսին և խնդրեցին որ վնասուածքներ կատարէ և լուր մը տայ: Երեք ամիս վերջը հիւպատոսէն պատասխոն ստացան թէ՝ հակա-ռակ թերթերուն մէջ տուած ազդին, ոչ ոք չէր ներ-կայացած այդ անունով և ոչ ալ ոեւէ մէկը անոր մա-սին տեղեկութիւն տուած: Կը կարծուէր որ խեղճ կինը, իր ընտանիքին անունը չվարկաբեկելու մտօք, իր բուն անունը չէր տուած այն ընտանիքին որուն մօտ սպասուէի մտած էր:

Քանի մը ամիսներ եւս անցան, բայց դարձեալ ոչ մէկ լուր... Հայրն ու զաւակները յուսահատած էին. մանաւանդ պզտիկը տխրութեան տակ ճգմուա-ծի երեւոյթ ունէր: Ի՞նչ ընել: Որ՞ով դիմել: Հօրը միակ գաղափարը եղած էր շատոնց Ամերիկա երթալ և կինը վնասել: Սակայն իր աշխատութիւնը... ո՞վ պիտի պահէր իր զաւակները: Անկարելի էր նաեւ մեծ տղան զրկել, որովհետեւ դեռ նոր սկսած էր գրամ շահիլ և շահածը պէտք էր իրենց ապրուստին հա-մար:

Այս ցաւալի վիճակով կ'ապրէին անոնք և ամէն օր նոյն ցաւալի խօսակցութիւնը կ'ունենային և կամ լուռ ու մունջ իրարու երես կը նայէին:

Իրիկուն մը պզտիկ տղան, Մարկոս, վճռաբար բառ.

— Ես կ'երթամ Ամերիկա մայրս վնասելու:

Հայրը գլուխը ցնցեց տխրութեամբ և պա-տասխան չտուաւ: Ըլլալիք բա՞ն էր: Տասներեք տա-րեկան տղայ մը, միս-մինակ, ճամբել Ամերիկա ուր երթալն իսկ մէկ ամիս կը տեւէ:

Սակայն տղան պնդեց համբերութեամբ: Պնդեց

նոյն օրը, կրկնեց յաշորդ օրը և ամէն օր, մեծ հանդարտութեամբ և հասուն մարդու մը պէս պատճառաբանելով:

— Ուրիշներ գնացին, կ'ըսէր, և ինձմէ աւելի պզտիկներ: Անգամ մը որ շոգենաւին վրայ ելլեմ, ուրիշներուն պէս ես ալ կը հասնիմ: Հոն հասնելուս պէս, հորեղբորորդւոյս խանութը կը փնտռեմ: Հոն այնչափ խտլացիներ կան, հարկաւ անոնցմէ մէկը խանութին ճամբան կը սովորեցնէ: Հօրեղբորորդիս որ գտնեմ, մայրս գտնուած է. իսկ եթէ զայն չգտնեմ, հիւպատոսին կը դիմեմ և արձենթինացի ընտանիքը կը փնտռեմ:

— Եթէ ոեւէ բան պատահի և դրամս հատնի, հոն ամենուն համար գործ կայ, ես ալ աշխատութիւն մը կը գտնեմ, գէթ ետ դառնալու չափ դրամ շահելու համար:

Եւ այս կերպով, կամաց կամաց, կրցաւ հայրը համոզել:

Հայրը զինք շատ կը սիրէր: Գիտէր որ խելք և քաջասրտութիւն ունի, թէ նեղութիւններու վարժուած ըլլալուն, պիտի կրնար տոկալ իր պաշտելի մարը գտնելու դժուարութեանց դէմ: Ասկէ զատ, իր բարեկամներէն մէկուն ծանօթը այս խնդրին մասին լսած ըլլալով, խոստացած էր երրորդ կարգի տոմսակ մը ձարել Ամերիկա մեկնող շոգենաւի մը վրայ:

Վերջապէս հայրը հաւանեցաւ և ճամբորդութիւնը որոշուեցաւ:

Զգեստները պզտիկ պարկի մը մէջ տեղաւորեցին, գրպանն ալ քիչ մը դրամ գրին և հօրեղբորորդւոյն հասցէն տուին ու ապրիլի գեղեցիկ իրիկուն մը զինք շոգենաւ դրին:

— Զագուկա, Մարկոս, ըսաւ հայրը արտասուքէն խեղդուած ձայնով, քաջ եղիր: Սիրելի մա-

մադ գտնելու սուրբ նպատակին համար գնա և Աստուած քեզի պիտի օգնէ...

* *

Խեղճ Մարկոս: Ան քաջ էր և չլացաւ իր հօրմէն և եղբորմէն բաժնուած պահուն. բայց երբ նաւը դանդաղօրէն սկսաւ հեռանալ ցամաքէն և իր գեղեցիկ ձենօվան կ'անհետանար հորիզոնին ետին, զինքը ձգելով լայնատարած ծովին վրայ, գիւղացի գաղթականներով խռնուած այն մեծ շոգենաւին մէջ, մինակ, անծանօթ բոլորին, քովս ի վեր այն պզտիկ պարկով որուն մէջն էր իր ամբողջ հարստութիւնը, անակնկալ վհատութիւն մը եկաւ վրան:

Երկու օր շարունակ ցուկին կողմը շան մը պէս կծկած մնաց, գրեթէ առանց ուտելու, լալու ամենամեծ պէտքէ մը ճնշուած:

Ամէն տեսակ տխուր մտածումներ կը չարչարէին իր պզտիկ ուղեղը. բայց ամենէն տխուրը ու ամենէն սոսկալին այն սեւ ու չար կտակածն էր թէ մի գուցէ իր մայրը մեռած ըլլայ: Իր ընդհատ ու չարատանջ մրափումներուն մէջ միշտ կը տեսներ երեսը անծանօթի մը, որ կարծես իրեն կը փափսար ու կ'ըսէր. — «մայրդ մեռած է...» Ու ընդոստ կ'արթննար:

* *

Քսան և Եօթն օր տեւեց ճամբորդութիւնը: Բայց վերջին օրերուն օդը գեղեցիկ և զով էր:

Նաւուն վրայ ծանօթացած էր ծերունիի մը հետ որ Ամերիկա կ'երթար իր որդին գտնալու: Անոր պատմած էր իր պատմութիւնը և ծերունին յաճախ ձեռքը անոր ծոծրակին տանելով կ'ըսէր. — «Քաջա-

սիրտ եղիր զաւակս, պիտի գտնես մայրդ ողջ ու առողջ»:

Նաւուն առաջակողմը նստած, ճիշդ քովիկը բարի ծերունիին, որ հանդարտ իր ծխափայտը կը քաշէր, ինքը հարիւր անգամ իր մտքին առջեւ կը բերէր իր Պուէնոս-Այրէս հասնիլը, հօրեղբօր որդիին առաջ վազելը, անոր հետ մէկտեղ տան մը սանդուխներէն վեր ելլելը և դեռ ինչեր... մինչեւ որ իր երեւակայութենէն սթափելով, դուրս կը հանէր կուրծքին վրայ կախուած մետալը և զայն համբուրելով իր աղօթքները կը մըմնջէր:

Մայիսի գեղեցիկ առաւօտ մը շոգենաւր կանգնեցաւ Պուէնոս-Այրէս քաղաքին դիմաց: Օդը հրաշալի էր: Անհամբերութենէն և ուրախութենէն ինքնիրմէն դուրս ելած էր: Իր մայրը քանի մը մզոն միայն հեռու էր իրմէ: Քիչ ատենէն զայն պիտի կարենար տեսնել: Եւ ինքը կը գտնուէր Ամերիկա, նոր աշխարհի մէջ և քաջութիւն ունեցեր հոն միս մինսկ գալու...

Եւ այնպէս երջանիկ էր որ ոչ զարմացաւ, ոչ ալ վշտացաւ, երբ զրպանները պրպտելով տեսաւ որ իր փոքրիկ գանձը չկայ: Գողցեր էին... ու միայն քանի մը ֆրանք մնացեր էր իր մօտ, բայց ի՞նչ փոյթ, քանի որ ան իր մօրը մօտն էր:

Իր պզտիկ պարկը շալկած, ուրիշ խտալացիներու հետ շոգեմակոյկի մը մէջ իջաւ որ զիրենք առաջնորդեց քարափ: Քարափին վրայ բարեւեց իր ծերունի բարեկամը և խոշոր քայլերով դէպի քաղաք ուղղուեցաւ:

*
* *

Առաջին փողոցին անկիւնը հասնելուն, կեցուց մարդ մը որ կ'անցնէր և անոր հարցուց Արթէս փո-

ղոցը: Բարեբաղդաբար մարդը խտալացի գործաւոր մըն էր որ հետաքրքրութեամբ տղուն երեսը նայելով ըսաւ թէ եթէ կարգալ գիտէ, կրնայ իր առջեւ բացուող մեծ փողոցին երկու կողմերուն վրայ բացուող փողոցներուն անունը կարգալով փնտռածը գտնել:

Տղան շնորհակալութիւն յայտնեց և իր առջեւ բացուող փողոցին ճամբան բռնեց:

Ուղիղ և անվերջանալի պողոտայ մըն էր, նեղ և խճողուած անկէ անցնող կառքերով, մարդերով և խոշոր բեռան սայլերով, որոնք խլացուցիչ աղմուկ մը կը հանէին: Ամէն մէկ քայլափոխին աջ ու ձախ կը դառնար և ուշադրութեամբ փողոցներուն անունները կը նայէր: Տարօրինակ անուններ որոնք դժուարաւ կրընար կարգալ: Ամէն մէկ փողոցի անկիւնը սիրտը բաբախել կը սկսէր, մտածելով թէ թերեւս իր փնտռածն է: Անցնող բոլոր կիներուն կը նայէր, կարծելով իր մայրը տեսնել: Եւ կ'երթար ու կ'երթար հետզհետէ աւելի արագ:

Քառուղիի մը հասնելով կանգ առաւ մայթին վրայ, Արուեստներու փողոցն էր: Ետեւը դարձաւ տեսաւ 117 թիւը, հօրեղբօր որդւոյն խանութը 175 թիւն էր, սկսաւ արագացնել քայլերը՝ վազելու առտիճան. 171 թիւին առջեւ ստիպուեցաւ կենալ՝ շունչ առնելու համար. կը մտածէր թէ արդեօք պիտի կրընար հոն տեսնել մայրը: Առաջ անցնելով գտաւ իր փնտռած թիւը, փերեզակի փոքրիկ խանութ մըն էր ան, ուր ակնոցաւոր կին մը կար գորշ մազերով:

— Ի՞նչ կուզես, տղայ, — հարցուց կինը սպանիական լեզուով:

— Ֆրանչէսքօ Մէրէլլի խանութը աս չէ՞, ըսաւ տղան, խպնուկ մը:

— Ֆրանչէսքօ Մէրէլլին մեռաւ, — ըսաւ կինը խտալերէն լեզուով:

Տղան սաստիկ ցնցում մը զգալով իր ներսը, հարցուց նորէն— ե՞րբ մեռաւ :

— Ամիսներ առաջ : Գործերը գէշ երթալուն պատճառաւ փախաւ ասկից, ըսին թէ Պահիա Պլանքա գացած է և հազիւ հոն հասած մեռեր է խեղճ մարդը :

Գոյնը նետեց տղուն և նուազուն ձայնով մը ըսաւ տիկնոջ, — Մէրէլի կը ճանչնար մայրս որ հոս Բէքուինէցի քով կը ծառայէր : Մայրս գտնելու համար միայն եկայ Ամերիկա : Մէրէլի հետ կը թըղթակցէի առաջ, ան գիտէր մօրս տեղը :

— Ես չեմ գիտեր — ըսաւ կինը, — բայց մեր բակը երիտասարդ մը կայ, որ գործակալը եղած էր Մէրէլիին, ան կը գիտնայ թերեւս, կանչեմ եթէ կ'ուզես : Իսկոյն կանչուեցաւ երիտասարդը որ ըսաւ թէ կը ճանչնայ այն աղախինը որ պարոն Մէքուինէցի քով կ'աշխատէր, Արուեստներու փողոցին խորը :

— Առաջնորդէ ինծի, ես դեռ գրրամ ունիմ : Այս խօսքերը անանկ եռանդով մը ըսաւ, որ առանց կնոջ խնդրանքին սպասելու, միւս տղան պատասխանեց. — «Երթանք» . ու առաջին անգամ ինքը աշխոյժ քայլերով դուրս ելաւ :

Գրեթէ վազելով, առանց նոյնիսկ խօսք մը փոխանակելու գացին մինչեւ Արուեստներու փողոցին խորը, ճերմակ տնակի մը երկաթէ վանդակին առջեւ կանգ առին և Մարկոս Իսկոյն զանգակին վրայ կոխեց :

Օրիորդ մը երեւցաւ :

— Հոս կը բնակի Մէքուինէց ընտանիքը, այնպէս չէ՞, հարցուց տղան անձկանօք :

— Հոս կը նստէր, պատասխանեց օրիորդը : Հիմա մենք կը նստինք :

— Ո՞ւր գացին Մէքուինէցները, հարցուց Մարկոս սրտատրոփ :

— Քօրտօվա մեկնեցան :

— Քօրտօ . . . օվա . . . բացազանչեց Մարկոս : Ո՞ւր է Քօրտօվա : Եւ այն իրենց աղախինը, կիներ, իմ մայրս : Սպասուհին իմ մայրս էր : Մայրս ալ միասին տարին :

Օրիորդը քիչ մը ապշած նայեցաւ և յետոյ ըսաւ :

— Ես չեմ գիտեր : Թերեւս հայրս գիտնայ : Մեկնած ատենին կարծեմ անոնց հետ տեսնուեցաւ : Սպասեցէք վայրկեան մը :

Օրիորդը ներս վազեց և քիչ յետոյ հօրը հետ վերադարձաւ : Բարձրահասակ մարդ մըն էր, գորշ մօրուքով : Ուշադիր ակնարկով մը նայեցաւ ճենովացի պղտիկ և համակրելի պատանիին և կոտորած խտրելէնով մը հարցուց անոր :

— Մայրդ ճենովացի՞ էր :

Մարկոս պատասխանեց թէ — այո՛ :

— Շատ լաւ, ճենովացի սպասուհին ալ միասին գնաց. եո լաւ գիտեմ :

— Ո՞ւր գնացին :

— Քօրտօվա . . . ասկէ բաւական հեռու քաղաք մը :

Տղան հառաչանք մը արձակեց. յետոյ աւելցուց լացակամած ձայնով մը. — Այն ատեն . . . պէտք է Քօրտօվա երթամ :

— Ահ, խեղճ տղայ, բացազանչեց մարդը, կարեկցութեամբ անոր նայելով. ասկէ շատ հեռու է Քօրտօվան, քանի մը հարիւր մղոն . . .

Մարկոս մեռելի պէս դեղնեցաւ և մէկ ձեռքով վանդակին երկաթին կրթնեցաւ :

— Խնդիր չէ՛, խնդիր չէ՛ . . . ըսաւ մարդը, յայտնադէս յուզուած և դուռը բանալով. — Ներս եկուր վայրկեան մը, նայինք բան մը կրնա՞նք ընել :

Ներս մտան, մարդը իր քովիկը նստեցուց տղան, պատմել տուաւ և ուշադրութեամբ մտիկ ըրաւ, քիչ մը մտածեց, յետոյ վճռական կերպով ըսաւ.

— Դուն դրամ չունիս, այնպէս չէ՞ :

— Դեռ ունիմ... քիչ մը, պատասխանեց Մարկոս :

Մարդը գրասեղանին առջեւ նստաւ, նամակ մը գրեց, փակեց և աղուն յանձնելով, ըսաւ.

— Ինծի նայէ, պղտիկ խտալացի, այս նամակով Պօքա գնա, ասկէ երկու ժամուայ ճամբայէ, հոն ձենովացիներ շատ կան : Հարցուր, ամէն մարդ քեզի կը ցուցնէ ճամբան : Հոն հասնելուդ, սա նամակի հասցէին պարոնը վնասուէ, հոն ամէն մարդու ծանօթ մէկն է : Նամակը իրեն տուր : Ան վաղը քեզի Ռօզարիօ կը ճամբէ մէկու մը հետ և հոն իր ծանօթներէն մէկուն կը յանձնարարէ որ քեզի մինչեւ Քօրտօփա տանի : Հոն Մէքուինէց ընտանիքը և մայրդ պիտի գտնես : Առ այժմ ա՛ռ սա դրամը.— և այս ըսելով աղուն ափը քանի մը Ֆրանք դրաւ.— գնա՛ և քաջ եղիր. հոս ամէն կողմ հայրենակիցներ ունիս, երեսի վրայ չես մնար : Երթաս բարով :

— Տղան — շնորհակալ եմ.— ըսաւ անոր, առանց կարենալ ուրիշ բառ մը գտնալու, դուրս ելաւ իր պարկով, և բաժնուելով իր պղտիկ առաջնորդէն, դանդաղաքայլ դէպի Պօքա ճամբայ ինկաւ, տխուր և զարմանքով լի, այդ աղմկալից մեծ քաղաքին մէջէն անցնելով :

* *

Դէպի Պօքա ճամբայ ելլելու վայրկեանէն մինչև յաջորդ օրուան իրկունը ինչ որ պատահեցաւ, իր

մտքին մէջ երազի պէս մնաց, որովհետեւ չափազանց յոգնած, խռոված ու վհատած էր : Պօքա հասնիլը, նոյն իրիկունը նաւահանգստի բեռնակիրներէն մէկուն անակին մէջ պառկիլը և հետեւեալ օրը առտուընէ մինչեւ իրիկուն նաւահանգիստի գերաններուն վրայ նստած, անօթի-ծարաւ սպասելը ու հազարաւոր նաւակներն ու նաւերը դիտելով օրը անցուցած ըլլալը հազիւ կը յիշէր, երբ իրիկուան վրայ զինքը հեծցուցին պտուղով բեռցուած առագաստանաւի մը վրայ և դէպի Ռօզարիօ ճամբայ ելան : Առագաստանաւին վրայ երեք ձենովացիներ կային, հովէն ու արեւէն պղինձի գոյն առած դէմքով : Անոնք իր գաւառի լեզուն կը խօսէին :

Մեկնեցան ու ճամբորդութիւնը երեք օր և չորս գիշեր տեւեց :

Երեք օր ու չորս գիշեր այն հրաշալի Փարանա գետին վրայէն, որուն երկարութիւնը ամբողջ Իտալիոյ չորս անգամէն աւելի է, առագաստանաւը դանդաղ ու մանուածապատ պտոյտներով առաջ կ'երթար :

Որչափ աւելի կը յառաջանային, այնքան աւելի այդ հրէշային գետը զինքը կը սարսափեցնէր : Ան կ'երեւակայէր թէ իր մայրը անոր բղիած տեղերը կը գտնուի և թէ նաւարկութիւնը տարիներ պիտի տեւէ :

Օրը երկու անգամ, քիչ մը հաց և աղած միս կ'ուտէր նաւավարներուն հետ, որոնք զինքը շատ տխուր տեսնելով, զրեթէ չէին խօսեր իրեն հետ :

Գիշերները նաւուն վրայ բացօդեայ կը քնանար և առտուները շատ կանուխ կ'արթննար : Ամէն անգամ արթննալուն, առաջին բառը որ միտքը կու գար Քօրտօփա բառն էր : «Քօրտօփա», կը կրկնէր շարունակ և իրեն այնպէս կը թուէր թէ առասպելական բան մը կար այդ անունին վրայ : Բայց յետոյ կը

մտածէր — մայրիկս ասկէ անցեր է, այս լեռներն ու ծառերը տեսեր է... ու այլեւս այնչափ չէր խռովէր այդ անուանէն:

Գիշերը, նաւավարներէն մէկը խտալերէն երգեր կ'երգէր: Իրեն այնպէս կը թուէր թէ մօրը օրօրն է որ կը լսէ: Վերջին գիշերը, այդ երգը լսելով, հեկեկաց: Նաւավարը ընդհատեց երգը ու իրեն պոռաց:

— Քա՛ջ եղիր, քա՛ջ, տղա՛յ: Ամօ՛թ է: Ճենսփացի մը չի լար տունէն հեռու ըլլալուն համար: Ճենսփացիները աշխարհը տակն ու վրայ կ'ընեն...: Ամէն ծովերու վրայ անոնց դըօշը փառապանծ է ու յաղթական:

Այս խօսքերը տղուն միտքը ցնցեցին: Լաւ ուրեմն, այո՛ — ըսաւ ինքնիրեն — եթէ պէտք ըլլայ ամբողջ աշխարհ շրջիլ, տարիներով ճամբորդել, հարիւրաւոր միտներ ոտքով կտրել, այո՛, պիտի երթամ մինչեւ որ մայրս գտնեմ:

Յաջորդ առտուն, ցուրտ և վարդագոյն օդով մը, Ռօզարիօ քաղաքին առջեւ հասան:

*
* *

Նաւէն ելլելէն քիչ յետոյ, պարկը ուսին, դէպի քաղաք բարձրանալ սկսաւ: Պիտի գտնէր արձենթինացի պարոն մը որուն հասցէին քառթ մը տուած էր Պօքայի իր պաշտպանը:

Ռօզարիօն ալ գրեթէ ճիշդ Պուէնոս-Այրէսին կը նմանէր, նոյնպէս ցած ու ճերմակ ներկուած տուներով և մարդերով ու սայլերով լեցուն փողոցներով:

Գրեթէ ժամ մը քալեց և յաճախ քառթին վրայի հասցէն հանդիպողներուն ցուցնելով, վերջապէս գտաւ իր նոր պաշտպանին տունը: Զանգակը հնչեցաւ: Խարտեաշ, խտաղէմ ու խոշոր մարդ մը ներ-

կայացաւ որ գործակատարի երեւոյթ ունէր և որ օտարահնչիւն ու տմարդի շեշտով մը հարցուց:

— Ի՞նչ կուզես:

Տղան տանտիրոջ անունը առաւ:

— Տանտէրը, պատասխանեց գործակատարը, երէկ իրիկուն Պուէնոս-Այրէս մեկնեցաւ ամբողջ ընտանիքով:

Տղան պապանձեցաւ: Յետոյ թոթովեց — բայց ես... մարդ չեմ ճանչնար հոս: Մինակ եմ: Եւ քառթը յանձնեց:

Գործակատարը առաւ, կարդաց ու նեղսրտութեամբ ըսաւ.

— Ես բան մը չեմ կրնար ընել, ամիս մը վերջ երբ վերադառնան, քառթը կը յանձնեմ:

— Բայց ես միս-մինակ ի՞նչ պիտի ընեմ... բացազանչեց տղան պաղատաւով:

— Է՛հ. ինձի՛ ինչ, ըսաւ միւսը ուսերը թոթովելով, կարծես թէ Ռօզարիօի մէջ քու բարեժողիկ ճենսփացիներդ բաւական չէին...: Գնա՛, խտալիոյ մէջ մուրացկանութիւն ըրէ...:

Եւ վանդակադուռը երեսին գոցեց:

Տղան հոն քարացած մնաց:

Յետոյ դանդաղ կերպով, պարկը ուսին, հեռացաւ կսկիծը սրտին, միտքը խռոված ու հազարումէկ մտածումներով պաշարուած: Ի՞նչ ընել. ո՛ւր երթալ. Ռօզարիօէն մինչեւ Քօրսովա երկաթուղիով մէկ օրուան ճամբայ էր: Իր քովը քիչ մը դրամ մնացած էր որ հազիւ մէկ օրուան ծախքին բաւէր: Ճամբորդութեան դրամը ո՛ւրիշ գտնալ...: Կրնար աշխատիլ, բայց ո՛րու դիմել...: Մուրալ... Օ՛հ, ո՛չ. աւելի լաւ է մեռնիլ քան մերժուիլ, նախատուիլ, վաճառուիլ ինչպէս քիչ մը առաջ այն

անսիրտ մարդը ըրաւ: Մուրալ... ո՛չ երբեք,
բնաւ:

Ու այս մտածմունքներուն վրայ, անգամ մըն
ալ զգաց թէ քաջասրտութիւնը իրմէ խոյս կուտար,
պարկը մայթին վրայ նետեց, վրան նստաւ, յուսա-
հատ վիճակի մէջ:

Յանկարծ ձայնէ մը ցնցուեցաւ որ լոմպար-
տացիի խտաբերէնով մը ըսաւ իրեն. — Հոս ի՞նչ կ'ը-
նես, տղայ:

Գլուխը վեր առաւ և իսկոյն տեղէն վեր ցատ-
կեց դարմանքի բացագանչումով:

— Դո՛ւք... հո՛ս:

Լոմպարտացի ծերունին էր որուն հետ բարե-
կամ եղած էին նաւուն վրայ. ծերունին ալ շատ
դարմացաւ, բայց տղան անոր ժամանակ չձգեց հար-
ցնելու ու ինք արագօրէն պատմեց իր գլխուն ե-
կածները:

— Հիմա դրամ ալ չունիմ: Ինծի գործ մը
գտէք, աշխատիմ, քանի մը ֆրանք շահիմ. ինչ գործ
ըլլայ կ'ընեմ. բեռնակրութիւն կ'ընեմ, ճամբաներ
կը մաքրեմ, գիւղերն ալ կ'աշխատիմ, կը բաւէ որ
սեւ հաց մը ճարեմ և կարենամ շուտով մեկնիլ. կա-
րենամ անգամ մը մայրս գտնալ. այս բարութիւնը
ըրէք, ինծի գործ մը գտէք, ի սէր Աստուծոյ, ես
այլեւս չեմ կրնար դիմանալ:

— Զարմանալի, դարմանալի՛ բան. — ըսաւ
ծերունին չորս կողմը նայելով և կզակը քերելով —
Ի՛նչ տարօրինակ պատահումնք...: Աշխատի՛ր... Ի՛նչ
դիւրին է ըսելը...: Կեցիր տեսնենք: Արդեօք կա-
րելի չէ՞ երեսուն ֆրանք մը ճարել մեր այստեղի
այնչափ հայրենակիցներէն:

Յղան անոր երեսին կը նայէր, յոյսի նշոյլով
մը մխիթարուած:

— Հետո եկուր, ըսաւ յանկարծ ծերունին:

— Ո՛ւր, հարցուց տղան պարկը առնելով:

— Ետեւէ՛ս եկուր:

Մարկոս՝ ծերուկին ետեւէն՝ բաւական տեղ
քալեցին, առանց խօսելու: Մարդը ճաշարանի մը
առջեւ կեցաւ, գլուխը ներս երկնցուց և յետոյ
տղուն դառնալով ըսաւ ուրախութեամբ. — Ճի՛շդ
ժամանակին հասանք:


Մտան մեծ սրահ մը, ուր բազմաթիւ սեղան-
ներ կային, ու շատ մը մարդիկ նստած կը խմէին,
բարձրաձայն խօսելով: Լոմպարտացի ծերունին ա-
ռաջին սեղանին մօտեցաւ և բարեւելու ձեւէն յայտ-
նի էր որ քիչ մը առաջ միասին եղած էր հոն նստող
վեց մարդոց հետ: Մարդիկը կարմրած երեսներով,
կը խնդային ու գաւաթները իրարու կը զարնէին:

— Ընկե՛րներ, ըսաւ Լոմպարտացին լուրջ ձեւով
մը, ոտքի վրայ կեցած և Մարկոսը ներկայացնելով.
այս տղան մեզի հայրենակից է. Ճենովայէն Պուէնոս
Այրէս եկած է միս-մինակ իր մայրը փնտռելու:
Պուէնոս-Այրէսի մէջ իրեն ըսեր են թէ. — Հոս չէ՛,
Քօրտօվա կը գտնուի: Նաւով Ռօզարիօ եկեր է,
երեք օր երեք գիշեր ճամբորդելով: Հոս երկու տող
յանձնարարական մը բերեր է մէկու մը որ զինքը
շատ գէշ ընդուներ է: Գրպանը սանթիմ մը անգամ
չունի: Մարդ չունի: Բարեսիրտ տղայ մըն է: Չեզի՛
տեսնեմ: Ամէննիս մէկ պիտի չկրնա՞նք տոմսակի մը
դրամ ճարել որ Քօրտօվա երթայ մայրը տեսնելու:
Ամօթ չէ՞ մեզի, հայրենակիցներուս, որ շան մը պէս
զինքը փողոցը ձգենք:

— Ըլլալիք բա՛ն է, վա՛յ... ստանկ խօս՞ք
կ'ըլլայ, գոչեցին սեղանին շուրջը նստողները,
բռնեցները սեղանին դարնելով. — Հայրենակից
մը...: — Հոս եկուր, մա՛նչուկ: Մենք գաղ-

Թականներս անանկ մարդիկ չենք: Նայէ՛ ինչ աղուոր
տղայ է: Դրա՛մ հանեցէք, ընկերներ: Կեցցէ՛: Մի-
նակ եկած է: Կտրիճ տղայ է: Խմէ՛ քիչ մը, հայրե՛-
նակից: Որո՞ւն տղան էս: Մի՛ մտածեր, մենք քեզի
մօրդ քով կը զրկենք:

Ու մէկը անոր այսը կը սեղմէր, մէկ ուրիշը



Տասը վայրկեան 42 Գրանի հաւաքուեցաւ

անոր ուսը կը շոյէր, երրորդ մը կունակէն պարկը
վար կ'առնէր. ուրիշ գաղթականներ մօտակայ սե-
ղաններէն կը մօտենային. տղուն պատմութիւնը
բերնէ բերան ճաշարանին մէջ տարածուեցաւ. քովի
սրահէն երեք արձենթինացիներ ալ մօտեցան և տա-
սը վայրկեանէն լծապարտացի ծերունին՝ որ իր գըլ-
խարկը բռնած էր, 42 ֆրանք հաւաքեց:

— Տեսա՞ր, ըսաւ ծերունին տղուն դառնա-
լով, այստեղին Ամերիկա կ'ըսեն...

— Խմէ՛, պողաց ուրիշ մը, գաւաթ մը գինի
հրամցնելով. — Քու մօրդ կենացը: Ամենքը գաւաթ-
ները վերցուցին: Եւ Մարկոս կրկնեց.

— Իմ մօրս... կե...: Բայց ուրախութեան
հեծկտուք մը կոկորդը խեղդեց, ու գաւաթը սեղա-
նին վրայ դնելով, իր ծերունիին վզին փաթթուե-
ցաւ:

* *

Յաջորդ առտուն, կանուխ, Մարկոս կառա-
խումբը առաւ ու Քօրտովա մեկնեցաւ, համարձակ
ու ժպտուն: Օդը մռայլ էր ու ամպոտ. կառա-
խումբը գրեթէ դատարկ. հեւալէն կը վազէր անհուն
դաշտագետնի մը վրայէն, ուր բնակութեան հետքն
անգամ չկար: Ինքը մինակ էր երկար շարակառքի
(վակօն) մը մէջ: Աջ կը նայէր, ձախ կը նայէր, ան-
վերջ ամայութիւն մը միայն կը տեսնէր: Կէս ժամ մը
կը քնանար, յետոյ արթննալով դարձեալ նոյն ամայի
տեսարանները կը տարածուէին իր աչքերուն առ-
ջեւ:

Պաղ հով մը սկսած էր փչել, որ իր երեսը կը
կճէր: Ապրիլին վերջերը ձենովայէն զինքը ճամբայ
հանած էին ամառուան հագուստներով, առանց մտա-
ծելու թէ այդ եղանակին Արթէնթինի մէջ ձմեռը կը
սկսէր:

Յետոյ քունը եկաւ և քնացաւ երկար
ատեն : Երազ տեսաւ թէ Քօրտօւփա հասեր է , ու ամէն
կողմէ , պատուհաններէն մարդիկ իրեն կը պոռային—
Չկա՛յ , չկա՛յ . . . հոս չէ՛ : Քունէն վեր ցատկեց զար-
հուրած և կառաշարին խորը նշմարեց երեք թաւամօ-
րուս մարդիկ , որոնք գոյնզգոյն վերարկուներու մէջ
փաթթուած , ցած ձայնով խօսելով իրեն կը նայէին :
Կասկածեցաւ թէ ատոնք աւաղակներ ըլլային որոնք
կ'ուզէին զինքը սպաննել իր պայուսակը գողնալու
համար : Յուրտէն և վախէն սկսաւ աւելի դողալ . բայց
երեք մարդիկը միշտ իրեն կը նայէին : Անոնցմէ մէկը
սկսաւ դէպի իրեն գալ . . . այն ատեն ինքը խելքը
կորսնցուց և բազկատարած անոնց առջեւ փազելով ,
գոչեց— Բա՛ն շունիմ : Աղքատ տղայ ս'եմ : Իտալ-
իայէն կու գամ , մայրս փնտուելու կ'երթամ : Մինակ
եմ , ինծի բան մի՛ ընէք :

Անոնք իսկոյն հասկցան , վրան խղճացին , երե-
սը շոյեցին ու հանգստացուցին շատ մը խօսքերով ո-
րոնցմէ ինք բան մը չհասկցաւ : Յետոյ տեսնելով որ
ցուրտէն կը դողդղայ , վերարկուներէն մէկը կոնակը
անցուցին ու տեղը նստեցուցին որպէսզի քնանայ :
Քնացաւ : Երբ գինքը արթնցուցին , արդէն Քօրտօւփա
հասած էր :

*
**

Ահ , ի՜նչ լայն շունչ մը քաշեց և ի՜նչ թափով
կառախումբէն դուրս նետուեցաւ : Կայարանի պաշ-
տօնեաներէն մէկուն հարցուց թէ ո՞ւր է Մէքուինէյ
ճարտարապետին տունը : Մարդը եկեղեցիի մը ա-
նունը տուաւ . տունը եկեղեցիին մօտն էր : Տղան դէ-
պի հոն աճապարեց : Գիշեր էր : Քաղաքը մութ ու
լուռ էր . սակաւաթիւ մարդիկ կ'երեւային փողոցնե-
րուն մէջ : Քահանայի մը հարցուց ու շուտով եկեղե-

ցին ու տունը գտաւ , դողդոջուն ձեռքով մը զանգա-
կին շուանը քաշեց , իսկ միւս ձեռքով կուրծքը
սեղմեց , սրտին բաբախումը զսպելու համար :

Պառաւ մը , ձեռքը լոյս մը բռնած , եկաւ բա-
նալու :

Տղան չկրցաւ իսկոյն խօսիլ :

— Ո՞վ կը փնտուես , հարցուց պառաւը սպա-
ներէն :

— Մէքուինէյ ճարտարապետը , ըսաւ Մարկոս :

— Դո՞ւն ալ Մէքուինէյ ճարտարապետին հետ
գործ ունիս . . . վա՛յ , վա՛յ , վա՛յ : Երեք ամիսէ ի վեր
պատասխան տալով գլուխս ուռեցաւ : Չէ՞ր բաւեր որ
թերթերը հրատարակեցին . պէտք էր պատերուն վրայ
ալ ազդեր փակցնել թէ Մէքուինէյ ընտանիքը գա-
ցած է Թուրքուման . . . :

Տղան յուսահատութեան շարժում մը ըրաւ ,
յետոյ սաստիկ զայրոյթ մը զգաց .— Անիծեալ ըլլա՛ն :
Ես առանց մայրս գտնալու , ճամբաները պիտի մեռ-
նիմ : Ե՛ս կը խենդենամ . անձնասպա՛ն կ'ըլլամ : Աստ-
ուած իմ : Ո՞ւր է ատ քաղաքը , ի՜նչ է անունը .
ո՞րչափ հեռու է :

— Ահ , խեղճ տղայ , պատասխանեց պառաւը
զթալով . շատ հեռու չէ , առնուազն չորս-հինգ հարիւր
քիլոմէթր ասկից . . . :

Տղան ձեռքերով երեսը ծածկեց . յետոյ հար-
ցուց լալազին :

— Ուրեմն հիմա ի՜նչպէս . . . ընեմ .

— Ես ի՜նչ կրնամ ընել , խեղճ տղայ , ըսաւ
կինը :

Բայց անմիջապէս միտքը բան մը ինկաւ և ա-
ւելցուց .

— Միտքս բան մը ինկաւ : Ինծի՛ նայէ , պրդ-
աիկ : Դարձի՛ր սա ճամբան , ձախ կողմը երրորդ

դրան առաջ ընդարձակ բակ մը պիտի տեսնես, հոն վաճառական մը կայ որ կարծեմ վաղը իր կառքերով և ապրանքներով Թուրքուման պիտի մեկնի. «նա՛ նայէ մէկ մը, թերեւս քեզի միասին կ'առնէ. փոխարէնը դուն ալ իրեն ծառայութիւն մը կ'ընես. գուցէ քեզի տեղ մը տայ կառքին մէջ. շո՛ւտ գնա»:

Տղան պարկը շալկեց, շնորհակալ եղաւ և երկու վայրկեանէն կանթեղով լուսաւորուած ընդարձակ բակի մը մէջ գտաւ ինքզինքը. հոն քանի մը մարդիկ ցորենի պարկեր կը բեռցնէին մեծ կառքի մը վրայ: Բարձրահասակ և մօրուքաւոր մարդ մը աշխատութեան վրայ կը հսկէր: Տղան պատկառանքով այդ մարդուն մօտեցաւ և իր խնդիրքը ներկայացուց, ըսելով թէ Խտալիայէն կու գայ և թէ իր մայրը գտնալու կ'երթայ:

Քափաթացը, որ կը նշանակէ՝ գլխաւոր (նոյն կարաւանին գլխաւոր առաջնորդը), անոր ոտքէն մինչեւ գլուխը չափեց նայուածքով և չոր կերպով պատասխանեց: — Տեղ չունիմ:

— Տասնեւհինգ ֆրանք կայ քովս, ըսաւ տղան՝ աղաչելով, քեզի կու տամ այս տասնեւհինգ ֆրանքս, ճամբուն մէջ ալ կ'աշխատիմ: Կենդանիներուն ջուր և վարսակ կը բերեմ, և ամէն տեսակ ծառայութիւն կ'ընեմ, միայն թէ քիչ մը հաց և պղտիկ տեղ մը տաս ինծի:

Քափաթացը նորէն նայելով տղուն՝ պատասխանեց քաղաքավարի շեշտով մը թէ, — տեղ չկայ... և յետոյ... մենք Թուրքուման չենք երթար, ուրիշ քաղաք մըն է մեր երթալիք տեղը, Սանթիակօ տէլլիսթէրօ: Բաւական տեղ նոյնն է թէեւ ճամբանիս բայց յետոյ բաժնուինք պիտի անպայման, ուրիշ անդին բաւական ճամբայ կ'ունենաս տակաւին՝ քալելով երթալիք:

— Ո՛հ, մի մտածէր այդ մասին բնաւ, ես այդ ճամբուն կրկինն ալ կը քալեմ, միայն թէ պղտիկ տեղ մը տաս ինծի, շատ կ'աղաչեմ, պարո՛ն, կը պաղատիմ մինակ չձգես դիս հոս:

— Գիտցած եղիր որ քսան օրուան ճամբայ է:

— Հոգ չէ:

— Դժուար ճամբորդութիւն մ'է, չեմ յուսար որ մինակդ կարենաս տոկալ այդ դժնդակ յոգնութեան և պատահական վտանգներուն:


— Բանէ մը չեմ վախնար, հերիք է որ գտնեմ մայրս, կ'աղաչեմ, մի՛ մերժեր, գլխա՛ վրաս:

Քափաթացը կանգեղ մը մօտեցնելով, անոր դէմքին նայելէ յետոյ ըսաւ, — շատ լաւ:

Տղան համբուրեց Քափաթացին ձեռքը և տեղաւորուեցաւ կառքի մը մէջ իրեն յատկացուած տեղը: — Կրնաս այդ տեղ քնանալ, վաղը առտուան չորսին կ'արթնցնեմ քեզ, — Պուէնսօս նօխէս (գիշեր բարի) ըսաւ կարաւանապետը և մեկնեցաւ:

Առտուան ժամը չորսին, երկայն կարաւանը, ճամբայ ելաւ, աստղերու լոյսով. իւրաքանչիւր կառքի լծած էին վեց եղներ, որոնց կը հետեւէին շատ մը կենդանիներ՝ փոխանակութեան համար: Տղան արթնցնելով, կառքերէն մէկուն մէջ պարկերուն վրայ դրին: Քունթաթախ տղան նորէն խոր քունի մէջ մտաւ շուտ մը, և երբ արթնցաւ, կաւաւանը կեցած էր, արեւով ողողուած ամայի տեղ մը: Բոլոր ճամբորդները, բոլորակ խոնուած էին շուրջը բացօթեայ կրակի մը որուն վրայ կը խորովէր քառորդ հորթ մը: Ամէնը միատին կերան, յետոյ լաւ մը քնանալէ վերջ նորէն ճամբայ ելան, այս կերպով զինուորական արշաւի մը պէս կանոնաւոր շարունակելով իրենց ընթացքը: Ամէն առտու ժամը հինգին ճամբայ կ'ենէին, ժամը իննին կը հանգչէին,

երեկոյեան հինգին կը մեկնէին որպէսզի տասնին նո-
րէն կանգ առնեն: Տղան խորովածին կրակը կը վա-
ռէր, կենդանիներուն կեր կու տար, կանթեղները
կը մաքրէր և խմելու ջուր կը բերէր: Ճամբորդու-
թեան օրերը անվերջ, միօրինակ և ձանձրալի էին,



Կարուանը դանդաղօրէն կը յառաջանար

անծիր ծովու մը վրայ անցուած օրերուն պէս, բայց
գեղեցիկ էր օդը: Ճամբորդները, սակայն օրէ օր ա-
ւելի կը նեղէին տղան՝ վճարուած սպասաւորի մը
հանդէպ եղած պահանջող կոպտութիւնով և սպառ-
նալիքներով, խոտի ծանր բեռներ կրել տալով և հե-
ռաւոր տեղերէ ջուր բերելու զրկելով, որով, խեղճ
տղան յագնութեան ծանրութենէն և սաստկութենէն
քուն անգամ չէր կրնար քնանալ: Իր ուժերուն ան-
համապատասխան աշխատանքէն մաշուած տաշուած,
անքունութենէն տժգունած, վրան գլուխը պատըռ-
տած և ազոտոտ, իր վրան տեղացած յանդիմանու-
թիւններէն և ծանր խօսքերէն տառապած՝ պիտի
կորսնցնէր իր կեանքը եթէ երբեմն Քափաթացը
չխրախուսէր զինքը քաջալերական խօսքերով: Շատ
անգամ կառքի մը առջեւը քաշուած կուլար՝ երեսը
պարկով մը ծածկելով: Ամէն առտու աւելի տկարա-
ցած և հալած կ'զգար ինքզինքը, կարծելով թէ պիտի
մեռնի մինչեւ իրիկուն, օրեր կային որ հազիւ կրը-
նար քաշկուտել իր ոսկոր-կաշի գոյութիւնը, ամէն
վայրկեան իյնալ մեռնելու հաւանականութիւնով:

Քափաթացին հոն չեղած օր մը, սարսա-
փելի ծեծ մը կերաւ ճամբորդներէն անխիղճ մէկէ
մը, որովհետեւ ջուր բերելու գացած և ուշ էր եկած:
Ամէն հրաման ստանալուն բռունցքի հարուած մը
կուտէր գլխուն հրաման ընողէն, կը ծաղրէին զինքը
և կը զուարճանային իր չարչարանքներով:

Օր մը այլեւս անկարող եղաւ ոտքի ելլելու,
և վրան ծածկոց մը առած երեք օր մնաց կառքին
վրայ շերմի կրակներուն մէջ: Ոչ ոք կը հետաքր-
քուէր իրմով բացի Քափաթացէն որ երբեմն կու-
գար ջուր տալ իրեն և քննել բազկերակին զարկը:
Տենգերու տազնապին մէջ, ինքզինքը այլեւս կոր-
սուած կարծելով օգնութեան կանչեց մայրը ողբա-

գին ձայներով, հարիւր անգամ արտասանելով անոր անունը, յետոյ ձեռքերը կուրծքին դնելով սկսաւ աղօթել: Քափաթացը կարեկցելով խնամեց զայն և շնորհիւ այդ խնամքներուն ոտքի ելաւ տղան, բայց հազիւ քիչ մը կազդուրուած՝ վրայ հասաւ իր ճամբորդութեան այն սոսկալի օրը ուր բաժնուելով կալաւանէն միս մինակը պիտի մնար բոլորովին: Երկու



... Զանոնք ետունք քարեկեց


շաբաթէ աւելի ճամբորդելով հասած էին հոն ուր թուրքումանի ճամբան կը դատուէ՝ Սանթիակօ տէլլիսթէրօ տանող ճամբէն:

Տղան կառքէն վար իջնելով հազիւ ժամանակ ունեցաւ համբուրելու ձեռքը Քափաթացի որ աճապարանքով տղուն պարկը անոր ուսերուն վրայ կապելով կարճ տեղեկութիւններ մը տուած էր ճամբու մասին: Կարաւանը շարունակելով ճամբան հեռացաւ անկից:

Այնչափ օրեր անծայր և միօրինակ դաշտագետնին մէջ ճամբորդելէ վերջ, առաջին անգամն ըլլալով, իր այդ ճամբորդութեան միջոցին, տեսաւ սպիտակ գազաթներով կապոյտ լեռներ որոնք իրեն ալպեանները կը յիշեցնէին. այդ լեռներու տեսքը և հետզհետէ օգին տաքնալը քիչ մը մխիթարեցին և խրախոյս տուին իրեն: Առաջին օրը ուժը ներածին չափ քալեց, և ծառի մը տակ քնացաւ: Երկրորդ օրը աւելի քիչ քալեց, որովհետեւ կօշիկները պատուտած էին, ոտքերուն մորթերը ելած, ստամոքսը գէշ սնունդէն տկարացած: Իրիկուան դէմ վախ մը եկաւ վրան, որովհետեւ Իտալիոյ մէջ լսած էր թէ օձեր կան այն երկիրներուն մէջ, և իրեն այնպէս կուգար թէ օձերու սողալու ձայներ կը պտրտէին իր շուրջը. երբեմն կանգ կ'առնէր սարսափէն, բայց յետոյ նորէն շարունակեց ճամբան: Հետզհետէ կը պակսէին իր ուժերը, և ոտքերը կ'արիւնոտէին: Վերջապէս օր մը արեւը մարը մտնելու պահուն, պատահական ճամբորդներ ըսին իրեն թէ թուրքումանը ասկից հինգ մղոն միայն հեռու կը գտնուի: Տղան չափազանց ուրախանալով արագացուց քայլերը: Բայց դժբաղդաբար ոյժերը սպառեցան յանկարծ և ինքը նուաղած ինկաւ փոսի մը քով: Գոհունակութիւն մը կար սակայն սրտին մէջ: Հրաշալի ապողաղարդ

գիշերը երբեք այսքան գեղեցիկ երեւցած չէր իրեն։
Քնանալու համար խոտերուն վրայ պառկած աստղե-
րը դիտելով կը մտածէր թէ թերեւս իր մայրն ալ
նոյն միջոցին կը դիտէր զանոնք, որով հոգիովը կը
խօսակցէր ու կը համբուրուէր իր մօրը հետ։

Տարաբաղդ Մարկոսը չէր գիտեր թէ ինչ վի-



Հաստաբուն ծառի մը տակ քնացաւ

ճակի մէջ կը գտնուի իր մայրը այդ միջոցին, չէր
գիտէր թէ ան հիւանդ պառկած էր, աղնուականի մը
տան ասորին սենեակներէն մէկուն մէջ։ Այդ տունը
բնակարանն էր Մէքուինէցի ընտանիքին, որ իրեն
նկատմամբ մեծ սէր ու խնամք ցոյց տուած էր։

Խեղճ կինը շատ հիւանդ էր արդէն երբ ճար-
տարապետը հարկադրուեցաւ մեկնիլ յանկարծ Պուէ-
նոս-Այրէսէն։ Քօրտօվայի մաքուր օդը չօգնեց բնաւ
իրեն, մանաւանդ՝ ոչ ամուսինէն և ոչ ալ հօրեղբոր-
որդիէն պատասխան մը չնդունելով իր նամակներուն
մեծ դժբաղդութեան մը նախազգացումի անձկու-
թեան մէջ կը տառապէր, ամէն օր տխուր լուրի
սպասելով իր վիճակը չափազանց գէշցեր էր և ծան-
րացեր։ Այդ տխրութեան վրայ աւելցած էր նաեւ
կուրադիքի սուր և փտանգաւոր ցաւ մը ուրիշ փր-
կուելու համար անհրաժեշտ էր վիրաբուժական գոր-
ծողութիւն մը։ Ճիշդ այն վայրկեանին երբ օգնու-
թեան կը կանչէր իր Մարկոսը՝ տանտէրն ու տիկինը
ամենայն քաղցրութիւնով կը ջանային համոզել զին-
քը որպէս զի յանձն առնէ ենթարկուիլ վիրաբուժա-
կան գործողութեան։ Հակառակ անոնց աղաչանքնե-
րուն, հիւանդը կը յամառէր մերժել առարկելով թէ
չունի բնաւ կարողութիւն տոկալու ո՛րեւէ գործողու-
թեան և կը նախընտրէ այսպէս հոգի տալ քան թէ
մեռնիլ վիրաբոյժին դանակներուն տակ։ Աւելի լաւ
կը սեպէր՝ ընտանիքին պատահած դժբաղդութիւնը
պատմող նամակները չկարդացած՝ մեռնիլ քան թէ
ապրիլ սպաննող վիշտերու մէջ։ Յետոյ կ'սկսէր հե-
կեկալով լալ և ձեռքերը իրարու միացուցած կան-
չել իր գաւառները որոնցմէ ևս լուր չունէր, որոնց
կարօտովը կը տապկուէր և որոնց մասին տխուր
կասկածներ ունէր։

Տանտէրն ու տիկինը իր անկողինին քով կե-

ցած հազար ձեւերով կը ջանային համոզել զինքը որ դէմ չկենայ գործողութեան : Սիրտերնին կը ճըմլուէր դիտելով վիճակը այն դմայելի մօր որ իր ընտանիքը փրկելու համար եկած էր մեռնիլ իր հայրենիքէն վեց հազար մղոն հեռու :

*
*
*

Յաջորդ օրը , առտուն կանուխ , իր պարկը շալկած Թուքուման կը մտնէր Մարկոս , կողալով բայց քաջասիրտ : Պուէնօս-Այրէսի մէջ վատուկած ջերմը ժամանակ մը անցնելէ վերջ նորէն եկած էր վրան : Մարկոս իր պարկն ու կմախքը կը պատցնէր հիմա Թուքումանի փողոցներուն մէջ , աչքը տնկած տուներուն դռներն ու պատուհանները , իր մայրը տեսնելու անձկալից յոյսով , աչքէ չէր փախցներ անցնող բոլոր կիները և ուշի ուշով կը դիտէր անոնց դէմքերը , չէր համարձակեր կեցնել անցորդ մը իր մայրը հարցընելու համար անոր : Իր պատուտած ու փոշոտ վրան գլուխը , իր ցամքած ու դէպդեղին դէմքը նախ հետաքրքրութիւն և յետոյ զգուանք կը պատճառէին տեսնողներուն :

Վերջապէս ճարահատ , ու իր մայրը գտնելու տենդէն բռնկած տղան մօտենալով՝ խտալերէն պիտակ ունեցող խանութի մը հարցուց հոն գտնուող ակնոցաւոր մարդուն և երկու տիկիններուն թէ ո՞ւր կը կենայ Մէքուինէց ընտանիքը :

— Մէքուինէց ճարտարապետը , — հարցուց խանութպանը : Այո՛ , Մէքուինէց ճարտարապետը , — պատասխանեց տղան , բարակ ձայնով մը :

— Մէքուինէց ընտանիքը Թուքուման չգտնուիր , — ըսաւ խանութպանը :

Յուսահատ , ցաւի աղաղակ մը փրթաւ տղուն

հոգիէն՝ դաշուհաճար եղած մէկու մը ցաւագին ճիշին պէս :

Խանութպանն ու կինը ոտքի ելած էին արդէն և քանի մը դրացիներ ալ հաւաքուած տղուն շուրջ ու կ'ուզէին հասկնալ թէ ինչ բանի հետեւանք է այդ տարաբաղդ տղուն վշտագին արտայայտութիւնը : Տղան ներս առին , նստեցուցին և խնդիրը հասկնալէ յետոյ բացատրեցին իրեն որ յուսահատելու բան չի կայ , որովհետեւ Մէքուինէցները Թուքումանէն քանի մը ժամ հեռու , այսինքն տասնեւհինգ մղոն անդին Սալատիոյ գետին եզերքը շաքարի գործարանին մօտը կը բնակին :

— Ես ամիս մը առաջ հոն գացի , — ըսաւ երիտասարդ մը որ հետաքրքրութեամբ վագեր եկեր էր Մարկոսին քով :

Մարկոս աչքերը լայն բացած , այդ երիտասարդին նայելով հարցուց անոր՝ անձկութիւնով , — պարոն , Մէքուինէցի խտալացի աղախինը տեսա՞ր :

— Ճենովացի կի՞նը : Տեսայ :

Մարկոս շղաձգական հեծկտուք մը փրցուց , կէս լալով ու կէս մը ծիծաղելով :

Յետոյ խնդրական անդիմադրելի շեշտով մը աղաչեց անոնց թէ ուրկի՞ց կ'երթցուի , շուտ ցոյց տուէր ինծի ճամբան , պիտի մեկնիմ անմիջապէս :

— Բայց օրուան մը ճամբայ է , — ըսին իրեն , ամէնը միասին , — յոգնած ես , հանգչէ , վաղ առտու կը մեկնիս :

— Անկարելի՛ է : Անկարելի՛ է , — պատասխանեց տղան : — Ըսէ՛ք ինծի , ո՞ւրկից կ'երթցուի , վայրկեան մը անգամ չեմ սպասեր , ճամբուն մէջ մեռնիլս ալ գիտնամ նորէն կը մեկնիմ անմիջապէս :

Տեսան որ կարելի չէ նոյնիսկ վայրկեանի մը համար ետ կեցնել տղան իր նպատակէն , ներկանե-

ընն մէկը մինչեւ քաղաքէն դուրս տանելով զինքը
ցոյց տուաւ ճամբան :

Այդ գիշերը շատ ծանրացաւ խեղճ հիւանդ կնոջ
վիճակը , ա՛յ սիրտ չէր դիմանար այն ողբուկոծին
որով հիւանդը իր զաւակները կը կանչէր , իր ձենո-
վան ու տունը կը փնտռէր , ձեռքերը կը կարկառէր ,
իր Մարկոսը գրկելու , համբուրելու համար : Մէքուի-
նէց ճարտարապետին և տիկնոջ , ինչպէս նաեւ բժիշ-
կին և աշակերտներուն ջանքերը բոլորովին անօգուտ
եղած էին գործողութեան ենթարկելով կեանքը փրկե-
լու համար , այլեւս յուսահատ՝ ամէնքը քաշուած էին
իր քովէն ձգելով զինքը իր հոգեվարժի ցաւերուն և
երկու հիւանդապահուիներուն հետ :

Քովի սենեակին մէջ արտակարգ աղմուկ մը
ծնաւ յանկարծ , քիչ մը առաջ իր քովէն բաժնուող-
ները նորէն ներս եկան՝ բարի լուր մը հաղորդելու ա-
ւետիսով :

— Պատրաստուէ՛ , Եօզէֆա , — ըսաւ տանտիրի-
նը , մէկը , շատ սիրած մէկդ տեսնելու , որ անակնկալ
կերպով հասաւ այս վայրկեանիս : Նոյն վայրկեանին ,
խանդաղատալից ճիշերու , անասելի հեծկոտութեան
մէջ գրկախառնուեցան մայր և զաւակ՝ վերացած համ-
բոյրներու և զիրար լափող կաթոգին նայուածքներու
մէջ :

Զաւակը տեսնելով փոխուեցաւ հիւանդին հո-
գեկան վիճակը , ուղեց կեանքին փարիլ և շուտով են-
թարկուիլ գործողութեան : Մարկոսը փոքրիկ պահ մը
բաժնեցին իր մօրմէն , ներս մտաւ բժիշկը իր օգնա-
կանին հետ՝ տասը վայրկեան վերջ դուրս գալով ա-
ւետեց աղուն ըսելով , — փրկեցիր մայրդ , ազնիւ տղայ :

ՎԵՐՁ

Մ Ե Ս Ր Ո Պ Ե Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆ

Հ Ի Մ Ն Ո Ւ Ա Ծ 1922

ՍՕՖԻԱ.—ՊՈԼԿԱՐԻՍ.

Ամբողջ պաւքաններու մէջ միակ գիշերօթիկ
հայ երկրորդական փորժարանն է , որ մասնաւորա-
բար այս տարի ազգային սեփականութիւն դառնալով
կը կառավարուի յատուկ խնամակալութեամբ :

ՃԵՄԱՐԱՆԸ հաստատուած Սօֆիայի մօտ
Բալլուֆօ արուստրձանին մէջ , ունի հիանալի օդ , գիշե-
րօթիկներու համար ամէն հանգստաւէտ պայման-
ներ , առատ սնունդ , մայրական խնամք , ծայրայեղ
մաքրութիւն և հայեցի ու ընդհանուր կրթութիւն :

Արձանագրութիւնները կ'սկսին ՄԱՅԻՍԻՆ :

ՏԱՐԵԹՕՇԱԿ — լէվա 12000, վճարելի 4 մաս-
նաւճարով :

Արձանագրութեան , տղայոց և զրամի փոխադ-
րութեան համար ամէն դիւրութիւն կը տրուի Պուք-
րէշի Օժանդակ խնամակալութեան կողմէ .

B-dul Maria No. 8 Bucureşti

ՀՀ Ազգային գրադարան



NL0224812

„Մ Ա Ս Ի Ս“

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ԼԷՅ 500,000

Պուրէշ, B-dul Maria, Nr. 8

Ընկերութիւնս ամէն ամսու 15-ին և 30-ին հրապարակ կը հանէ մէյ մէկ գիրք 32 էջէ բաղկացեալ:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ Է

- 1) Տէրն ու ծառան եւ ուրիշ պատմութիւններ
- 2) Սասունցի Դաւիթ
- 3) Մըջիւնները
- 4) Լուսերեսն ու Վարդերեսը եւ Սաղարած Աղջիկը
- 5) Ուրախ Հնակարկատը եւ Ոսկիէ Աղջիկը
- 6) Մօրը համար

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

- Տորք Անգեղ
- Աւիւծի Տղան
- Արեգնազան
- Ռէյնիկէ Աղուէսը
- Գրիմ եղբայրներու հէքեաթները ևն, ևն.

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԷՆ

Յօդ. 7. — Հրատարակել հայ տղոց և պատանիներու համար հայերէն դասագրքեր, գրական գործեր և հանդէսներ. տարածել հայ հասարակութեան խաւերուն մէջ արեւմտեան մշակոյթը, ինչպէս նաև ծանօթացնել օտարներուն հայ մշակոյթը:

Հաստատել յատուկ մրցանակ՝ ընկերութեան շահին մէկ մասովը, բաշխելու համար արժէքաւոր գրական գործերը: